ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

06 սեպտեմբերի 2019 թվականի թիվ 327- Ա

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ներքին աուդիտի 2019 թվականի տարեկան ծրագրով՝

կարգադրում եմ

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Լճկաձորի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2019 թվականի սեպտեմբերի 09-ից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր, իրականացնել համապատասխանության աուդիտ հետևյալ կազմով՝

   Անժելա Սիմոնյան - մարզպետարանի ներքին աուդիտի գլխավոր մասնագետ
   Կարեն Նազարյան - մարզպետարանի ներքին աուդիտի գլխավոր մասնագետ:

2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել Տավուշի մարզի «Լճկաձորի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից 2017, 2018 թվականների ընթացքում իրականացված ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախատեսված և կատարված ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:

3. Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ մասի իրականացնել հիմնական միջոցների գույքագրում:

4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Տավուշի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի վարիչի ժ/պ Արտեմ Ոսկանյանին:

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

X

06 սեպտեմբեր 2019թ.
ք. Իջևան